ՆՈՐ-ԴԱՐ

№ 156 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 18 Սեպտեմբերի 1885 Չորեքշաբթի 18 Սեպտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 156

Տարեկան 10 րուբլի. վեց ամսով՝ 6 րուբլի. երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
Հատուկ 5 կոպեկի.
Բաժանորդ ընդունվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի ամեն օրից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն ժամ։
Յայտարարությունների բաժին 2 կ., երկրամասերի համար՝ կրկնապատիկ։

ՊՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Քաղաքական դէպքերից։
Բրօնիկոն. — Լուրեր։ Ձանազան-հորդական նկատողութիւններ։
Թղթակցութիւններ. — Շուլյաներ։
Քաղաքական. — Արեւելեան Ռումելիա։ Արեւելեան-Ռումելիայի ապագա տարբերութիւնը։ Լուրեր։
Թառնլուրեր։
Հեռագրեր։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 17 սեպտեմբերի 1885 Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԻՑ

—

Մինչեւ Ասիայի վէճը, եգիպտական խնդիրը, Կարոլինեան կղզիների առթիւ Սպանիայի և Գերմանիայի մէջ ծագած տարաձայնութիւնը արդէն երկրորդ տեղն են բռնում և այնքան էլ չեն հետաքրքրում քաղաքական նորութիւնները խնդրողներին։ Այժմ առաջին տեղը բռնում է զարթնել Բալկանեան Թերակղզու խնդիրը, որ կազմում է արևելեան խնդրի մի մասը. գրա վերայ է դարձած այսօր ամենի ուշադրութիւնը։

Որքան էլ որ խնայող է Հիւսիսային Հեռագրական Գործակալութիւնը իր արած հաղորդութիւններով, բայց Բալկանեան Թերակղզում տեղի ունեցող անցքերի վերաբերութեամբ ընթերցողները բաւականին տեղեկութիւններ կարող են քաղել մեր ստացած հեռագրներից։

Բացի Հարաւային և Հիւսիսային բոլգարացիներից, ոտքի են կանգնել և ալբանցիները, և արդէն արիւն է հոսում ալբանեան լեռների վերայ։ Գրեթէ Բալկանեան Թերակղզու վերայ բնակուող բոլոր ազգութիւնները զինվում են և պատերազմի են պատրաստվում։ Սերբիան զօրքերը սահմաններին է մօտեցնում, Յունաստանը ծովու և ցամաքի վերայ զինվում է. փոքրիկ Մօնտենեգրօն իւր քաջ զինուորներին (որոնց ամենքը զինուոր են և հայրենիքի պաշտպան) ոտքի է կանգնեցնում, մինչև անգամ Կրետէ կղզու ժողովուրդը պատրաստվում է իւր անկախութիւնը հրատարակելու։ Միով բանիւ հեռագրերը աչքի անցնելով Բալկան Թերակղզու դրութիւնը այնպէս է պատկերանում, ինչպէս որ մի վողոցով թռուլուզով ձի անցնելիս յանկարծ թռուլուզը ծակուի և դրացիները դուրս թափուին մէկը մի հողէ տման ձեռքին, միւսը մի կուժ, մէկ ուրիշը մի շիշ... որպէս զի գետին թափուող ջրից իրենց մասը հանեն։

Այս անգամ զէնքերի ձայները և վառօդի հոտը այնքան երկիւղ չը պէտք է ազդեն, ինչու որ այդ բազմաթիւ հեռագրերից մի քանիսը յոյս են տալիս, որ խաղաղութիւնը շուտով կը վերականգնուի. եթէ պատերազմ էլ բացուելու լինի, որոշ շրջանակի մէջ կը մնայ և երկար էլ չի տեւի։

Վերջին հեռագրերից չէ երևում, որ Մուխտար-փաշան Արևելեան Ռումելիայում զօրքը առաջ լինի խաղցնում, այլ դրա հակառակ երևում է, որ Բ. Դուռը համաձայնուել է դեսպանական կոնֆերէնցիային թողնելու տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւնների վճիռը, որը պիտի կայանայ Պօլսում։

Խաղաղութեան վերականգման աւելի մեծ ապահովութիւնն այն հանգամանքի մէջն է երևում, որ իշխան Բիսմարկը Բալկանեան Թերակղզում այժմ տեղի ունեցած փոփոխութիւններին, որոնք ընդդէմ են 1878-ին Բերլինեան կոնգրէսի վճիռներին, իւր հաւանութիւնը չէ տալիս, այլ դեռ խօսանում է պաշտպանելու Սուլթանի իրաւունքները Ռումելիայում և Բոլղարիայում։

Բոլոր նշանները ցոյց են տալիս, որ մեծ պետութիւնները պատերազմելու տրամադրութիւն չունին, ուստի և չեն թողնիլ երկրորդական և երրորդական տերութիւններին ընդհանուր եւրոպական խաղաղութիւնը խանգարելու։

Ի հարկէ Բ. Դրան կը մնայ իւր զուր արիւնհեղութեան պատճառը գառնալ և իւր ոյժերն էլ սպառել և աւելի պարտքերի մէջ ընկնել, այլ սպասել դեսպանաժողովի վճռին։ Իսկ այդ վճիռը Չաւանական է, որ Արևելեան Ռումելիայումն տեղի ունեցած փոփոխութիւնը իբրև fait accompli ընդունէ մի քանի փոփոխութիւններով յօգուտ Սուլթանի գերիշխանութեան։

Ս. Ս.

ՔՐՕՆԻԿՈՆ

ԲԱԳՈՒԻՑ. — Անցեալ տարի Բագուում կազմուեցաւ Թատրոնական մասնաժողով մի տարի ժամանակով, որի նպատակն էր Հայկական Թատրոնի գործը առաջ տանել այստեղ, բայց անդամներից շատերը գործին հմուտ չը լինելու պատճառով բացի մի փոքրիկ դրամագլուխ կազմելուց, ոչինչ չը կարողացան շինել։ Այժմ ներկայ սեպտեմբեր ամսին տարեշրջանը լրացած լինելով, անդամների նոր ընտրութիւն է նշանակուած, յուսով ենք, որ նրանք, որոնք գնահատում են Հայկական Թատրոնի գոյութիւնը, անցեալ տարուայ փորձից օգուտ քաղելով, այս անգամ յաջող ընտրութիւն կանեն։

Սեպտեմբերի վերջերում կը լինի մի երաժշտական երեկոյթ, հանդերձ պարահանդիսով յօգուտ Թատրոնական դրամագլխի։ Երաժշտութեանը, ինչպէս լսեցինք, կը զիկավարէ պ. Կարա-Մուրզան, որը այժմ բնակութիւն է հաստատել Բագուում։ Յանկանում ենք, որ այս տարուայ երեկոյթն էլ անցեալ տարուայ նման արդիւնաւոր լինի, որը մօտ 400 րուբլի զուտ արդիւնք տուեց, մանաւանդ որ Թատրոնական դրամագլուխը այդ աղբիւրից է կազմվում մինայն։

—

ԲԱՆԻ ԳԻՒՂԻՑ.—Այս գիւղը գտնվում է ստորին Բասենում, Երասխից դէպի հարաւ, ուղի վերստ հեռաւորութեամբ։

Օգոստոս ամսին մեր վիճակային (Դ.արսի) առաջնորդ Դր. եպ. Աղուանեանը եկաւ շրջակայ գիւղերի այցելութեան, և Արմուդլի գիւղում ժողովրդին յորդորելով կարգադրեց, որ նշանագրութեան վաղեմի „պաշտը“ սովորութիւնը վերջանայ, այլ և 1886 Թ.-ից իւրաքանչիւր քահանային օրինակատարութեան (մկրտութիւն, պսակ, կողպատ, տնօրհնէք) համար վճարեն տարեկան մի րուբլի և մի կօզ ցորէն, իւրաքանչիւր տան վերայ, ժողովուրդը ընդունեց այս առաջարկութիւնները և սրբազանը վաւերացնելով գրանց, դիմեց տահմանագլխի վերայ գտնուող Զիլիոհանք գիւղը, որտեղ նորակառոյց եկեղեցին օծելուց յետոյ, Ճանապարհ ընկաւ դէպի իւր տեղը։

—

„С. Пет. Листокъ“ լրագրի ասելով հարաւային Ռուսիայի ոչխարատէրերի ընկերութիւնը ձեռնարկում է Պետերբուրգում կառուցանել բ-րէզ փէրէ և հանելու մի ընդարձակ գործարան, որի պատրաստած մանուածքը կուղարկուի վաճառուելու արտասահմանեան վաճառանոցներում։

—

"Новости" լրագրի ասելով յանձնաժողովը արդէն քննեց եւրոպական մինիստրութեան կազմած այն ծրագիրը, որը վերաբերում է գործարանատէրերի և գործատուատէրերի պատասխանատուութեան՝ բանուորների մահուան և անդամահատութեան դէպքերում։ Ծրագիրը քննելով յանձնաժողովը այն եզրակացութեան եկաւ, որ բանուորների դժբաղտութեան պատասխանատուութիւնը ընկնում է գործարանատէրերի վերայ, բացի այն դէպքերից, երբ դժբաղտութեան առաջն առնելը անկարելի է համարվում և կամ ինքը բանուորն է դրա պատճառը, դիտմամբ փորձեր կատարելով։

—

„Моск. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ ս. Սինոդում քննվում է կիւրակի և տօն օրերին արդիւնաբերական և առևտրական աշխատանքները արգելելու հարցը։ Այս հարցի վերջնական վճիռը, ինչպէս լսվում է, տեղի կունենայ ներկայ տարուայ վերջին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ.—Կենսական պիտոյքները այստեղ խիստ ժամն են։ Այս տարուայ բերքը, ինչպէս բամբակ, ցորէն, գարի շատ առատ է։ Դիւղացիները օրերով պառկում են հասարակաց կըշեռքի մօտ, որպէս զի իրենց բերան արդիւնաբերութիւնը ծախուի, բայց չէ ծախվում, ծախսածն էլ շատ ժամն է լինում, այնպէս որ գիւղացիների ձեռքը հազուստի փող էլ չէ ընկնում։ Ցորէնի խալվարը (30 պուդ) 12 րուբլի է գարինը՝ 6—7 ր.։

—

ԿՈՒՐԼԱՆԴԻԱՅԻ նահանգապետի պաշտօնակատարը յայտնեց Կուրլանդեայի նահանգի բոլոր քաղաքագլխներին, որ կարավարչական տեղերի և պաշտօնական անձինքներին դիմելու ժամանակ պէտք է գործածել ռուսաց լեզուն։ Նահանգապետի չիշեալ շրջաբերականը „Рижская Газета“ լրագրի ասելով, քննութեան ենթարկուեցաւ Վինդաւի խորհրդարանում և վճռուեցաւ՝ նահանգապետի յորդորութիւնը դէմ բողոքել Սենատում։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մանուէլ Միրզախորեանից „Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս արևելեան Տաճկաստանի“ նրա աշխատութեան Գ. մասը։ Դիրքը բաղկացած է 224 երեսներից և տպուած է Կ. Պօլսում Պարտիզպանեանի տպարանում, ներկայ 1885 Թ.։ Վաճառվում է Կ. Պօլիս բոլոր գրավաճառների մօտ, գինը 8 դահեկան է։

Պ. Միրզախորեանի աշխատութիւնը Ձանապարհորդական տպաւորութիւնների մի ժողովածու է և պարունակում է իւր մէջ աշխարհագրական, պատմական, վիճակագրական, տնտեսական և այլ տեղեկութիւններ. անխտիր նկարագրուած են բոլոր բնակիչների քարքը, վարքը, սովորութիւնները, առանդութիւնները և այլն։

—

„Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ Հիւսիսային Դվինայի և նրա վտակների արագ և զգալի կերպով ծանծաղանալու պատճառով Արխանգելսկի և օտարազգացի վաճառականները, որոնք կապ ունին Հիւսիսի վաճառականութեան հետ, նոքից հարց են զբաղեցրել միջնորդելու, որը անցեալ տարի չը յաջողուեց.—անյապաղ երթալուզու գիծ անցկացնել մինչև Արխանգելսկ։

—

„Кавказъ“ լրագրի ասելով անտառային քննիչ պ. Մարկգրաֆը, որը պետուորական վարչութեան կարգադրութեամբ ուղարկուած էր Ալժեր այդ բոյսը ուսումնասիրելու, վերադարձաւ Թիֆլիս, և այս օրերս ուղևորում է Կիսիլ-Արվադ այդ մշակութեան համար տեղ ընտրելու։ Ցիշեալ բոյսը շատ քանդագին յատկութիւն ունի չոր և աւազոտ տեղերում, և մտադրութիւն կայ դրան աճեցնելու Անդրկասպեան երկրում զինուորական երկաթուղին աւազի հոսանքներից պաշտպանելու համար։

—

Ներքին գործերի մինիստրութեան կառավարչը ամսիս 14-ից տեղեկացրել է Կովկասեան կառավարչապետին, որ գրաքննական կանոնադրութեան XIV-դ յօդուածի ծանօթութեան համաձայն վերայ (յաւելուած 1873 Թ.) Թիֆլիսում վրացերէն լեզուով հրատարակուող «Դրօէբա» (ժամանակ) լրագիրը բոլորովին դադարեցնվում է։

„Դրօէբայի“ խմբագրութիւնը, ամսիս 17-ին, առանձին Թերթերի վերայ տպուած յայտարարութիւնով իւր բաժանորդներին յայտնեց «Դրօէբայի» դադարեցնելը։

„Դրօէբայի“ հրատարակութիւնը սկսուել է 1866 Թ. մարտի 4-ից և դադարեցնվում է 1885 Թ. սեպտեմբերի 16-ին։

—

Ի նկատի առնելով բանկերի գործերի անկանոն վիճակը և նրանց մէջ կատարուած չարաշահի դէպքումները, կառավարչական շրջաններում, ինչպէս հաղորդում է „Русскій Курьеръ“ լրագիրը, մշակվում են նոր կանոնները բանկերի վերաբերութեամբ։

—

Պետական գլխաւոր կառավարութեան կարգադրութեամբ ամսիս 22-ին և 26-ին ցերեկուայ ժամը 3-ին, Թիֆլիսի Մուշտայիդի այգու հետ, Դիդուբայի գաշտում տեղի կունենայ ձիարշաւ։

—

„Кавказъ“ լրագիրը հաղորդում է, որ ամսիս 11-ին Թէլաւի գաւառում եղած սաստիկ կարկուտից փչացել են խաղողի այգիները հետեւեալ գիւղերում. Ռուիսպիրի, Կուրդկեւառի, Շալաուրի, Կասեսխևի, Ծինանդալի, Կոնդալի, Ախուրա և Ջանուանի։

—

Արտասահմանից զանազան վիճակներ և պատուերներ ստանալը նորահաստատ կանոնների համաձայն, որոնց ներկայ տարուայ սկզբում նեռմուծեց մաքսային վարչութիւնը զանազան մաքսանենգութիւնների առաջը առնելու համար, փորձից երևաց, որ շատ ուշ է կատարվում, որովհետև պետական հիմնարկութիւնները ուղարկում են, արտասահմանից ստացած բոլոր վիճակների պատուերները նոր կանոնների հիման վերայ մաքսատուն։ Մի քանի անձինք, որոնք մշտական յարաբերութեան մէջ են գտնվում արտասահմանի հետ, առիթ ունենալով այդ տեսակ կարգից պատճառած վնասը իրենց առևտրական գործերին, դիմել են եւմատական մինիստրին այս նորահաստատ կանոնները վոխելու։ Այժմ, ինչպէս հաղորդում են „Рус. Кур.“ լրագրին, մի համաձայնութիւն է կայացել մաքսային և պետական վարչութիւնների մէջ, որով այսուհետև սահմանվում է հետեւեալ կարգը՝ 1) Արտասահմանից երկաթուղով, ծովով կամ պետական Ճանապարհներով պետերը գալուն պէս, մաքսային վարչութիւնից պիտի գնան մաքսատան պաշտօնատարները ներկայ գտնուելու պետով ստացած երերի բացմանը և վիճակների պատուէրները միմեանցից ջոկելու. 2) եթէ որ արտասահմանից պետը գալուն պէս չերևան մաքսային պաշտօնատարները, առանց որև է յետաձգութեան, պետային պաշտօնատարներից կը ջոկուին և կը ցրուին ըստ պատկանելոյն, իսկ կասկածելի վիճակները խնդրն կուղարկուին տեղական մաքսատուն. 3) պետային վիճակների մաքսային քննութիւնը կը կատարուի սահմանագլխի վերայ գտնուած պետային հիմնարկութիւններում պետային պաշտօնատարների ներկայութեամբ, կամ պետային չոգեկառքում, և բացի սրանից եթէ վիճակների ջոկջոկելը պետային պաշտօնատարների ձեռնարկվելուցանալ մինչև չոգեկառքի գնալը, այն ժամանակ պետային պաշտօնատարները կերթան չոգեկառքով և Ճանապարհին կը վերջացնեն վիճակների քննութիւնը ու նրանց ջոկ ջոկելը։ Մի այսպիսի կարգ ներկայ ամառայ ընթացքում կը սահմանուի պետային բոլոր հիմնարկութիւնների մէջ

որով նշանաւոր կերպով կարագանայ պօստային փաթեթների փոխանակութիւնը արտասահմանի պօստային հիմնարկութիւնների հետ։

—

Երկուշաբթի, սեպտ. 16-ին ուշ պատճառով տպարանում չէին քանում, հետևաբար սեպտ. 17-ի համարը հրատարակուեցաւ 18-ին։

—

ԷՋԱՄԻԱՆՆԻՑ.—Ձեմարանի վերաքննութիւնները և նոր ընդունելի աշակերտաց քննութիւնները վերջացան։ Դիշերօթիկ և երկհատիկ խնդրատուների թիւը հասնում էր մօտ 200-ի, թէպէտև 20 հոգու համար տեղ կար։ Քննութեամբ ընդունած 20 աշակերտների ցուցակը առաջարկուեցաւ Սինոդին, բայց Սինոդը իւր արած վճռին համեմատ մերժեց ընդունած աշակերտներից գիշերօթիկներին յայտնելով, որ այդմասին կարգադրութիւնը ապագային է թողնւում։

Լաւ կը լինէր, որ որոշումը ամիսներով առաջ յայտնի լինէր, որպէս զի իւրաքանչիւր տեղը ազգատ և որբ օտարական աշակերտները այստեղ հաւաքուելով իրենց հայրենիքը վերադառնալու համար առանց Ճանապարհածախքի չը մնային։

Զը գիտենք ուրիշ տեղ լինչպէս են գնում տեսուչները, երբ նրանք հրաւիրւում են յանկարծակի քան ամենայնի իրենց անմանօթ մի աշխարհ կամ մի պատանի, բայց մեր նորընծաւ տեսուչ պ. Խորհէվը բացի ուրիշ պիտանի և աւելորդ բագաժից բերել է երկու աշակերտ՝ Ձրիաւարժ և գիշերօթիկ լինելու։ Դրանց էլ չեն ընդունում։ Նոր ընտիր տեսուչն էլ իւր կողմից մերժում է սինոդականների խնդիրքը, երբ սրանք առաջարկում են նրան ընդունելու իրենց բարեկամներից որևէ երեւելի աշակերտ։

Դուք տեսնում էք, որ հայերէն լեզուին և գրականութեան բոլորովին անտեղեակ լինելը ամենևին չէ արգելում մեր մարդկիներին խոյն «հանգը» գտնելու։

Նոր տեսչութիւնը աշակերտների ընդունելու կամ չընդունելու պայմանը, յաջողակ և լաւ, կամ անյաջող և վատ քննութիւնն չէ համարում։ Այսպէս չընդունել նշանակուած աշակերտներից շատերին ընդունում են, իսկ յաջող և լաւ քննութիւն տուող աշակերտը երբ առաջարկում է որ իրեն ևս ընդունեն—բացասական պատասխան է ստանում։

—

ՎՐԻՊԱԿ

«Նոր-Դար»-ի № 155-ում երևանից հրատարակուած Թղթակցութեան մէջ երևանում նոր բացուելիք Ճանապարհի մասին սխալմամբ դուրս է եկել «շատ ծախսով կարելի է գլուխ բերել», պէտք է լինի «շատ սակաւ ծախսով»։ Կամուրջի մասին դուրս է եկել «շինուել է», պէտք է կարդալ «պէտք է շինուի»։

ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այնուհետև ես ինձ առողջ և լաւ տրամադրութեան մէջ էի զգում Դիսբօցկու լեռան վերայ. անձրևից գոյացած հեղեղը մեզ վրանի միջովն էր հոսում և վրանը մեզ չէր պահպանում։ Անձրևը տևեց 2—3 ժամ։ Ջուրը վրանում $^1/_4$—$^1/_2$ արշին բարձրութեան էր հասել և նրա մէջ լողում էին զանազան առարկաներ՝ սանդրը, հայելին, մակարօնը և այլն։ Ես և ընկերս ոտի վերայ կանգնած միմեանց էինք նայում։ Մեր մի ուրիշ ընկերը խուրջիններից, սնդուկներից և մավրաշներից կազմել էր մի բլուր, որի վերայ ինչպէս Նոյը տապանում ապաստան էր գտել։ Անձրևը մեր բոլոր ունեցածը և մեզ էլ հետը թրջեց, անձրևը գադարելուց յետոյ աշխատեցինք մի փոքր ցամաքացնել մեր հագուստները և այլն, յետոյ չարունակեցինք Ճանապարհը։ Մագան գետի սկզբներում, Մագանի լեռների ստորոտներում ամբողջ օրը անձրևի տակ անցնելուց յետոյ մենք քաթափի տակ իջևանեցինք. օր մէկ կողմից մեր վառած ահագին կրակը, միւս կողմից քաթափը և մեր առաջ եկող անձրևը և ահագին մինչև 7—8 սաժէն բարձրութեամբ քարերը կախարդական պատկեր էին ներկայացնում։ Չորւոհական պարզ կեանքը ունի իւր լաւ կողմերը։ Մեծ ֆիզիքական բաւականութիւն է զգում մարդ, երբ ամբողջ օր կատարի բնութեան հետ կռուելուց յետոյ, նա նոյն իսկ բնութեան՝ քարափի տակ տապատարան զատ տեսնում է և լսում է բնութեան կատաղութիւնը, բարկութիւնը... Իսկ Մագանի գետի դէպի անդունդը գլորուող ջրերը լրացնում էին բնութեան կատաղի երաժշտութիւնը, որը մենք լսում էինք եաւինջներ ծածկած քարափի տակ նստած կրակի առաջին թէյը խմելիս և ծխախոտաբ ձեռներիս։

Մենք հետևում էինք մեր գործը չատ վերջացնել, այս պատճառով եղանակին չէինք նայում։ Մաստմբ անձրևի տակ, երբեմն էլ ամբողջ օրը անձրևով մենք օրական 20—25 վերստ լեռնային Ճանապարհ էինք գնում։ Լեռները մէջքերով և կողքերով գնալիս խոնաւ խոտի վերայով մարդի ոտը իւրաքանչիւր քայլում սլսկվում է։ Այդ անձուկ Ճանապարհներում երկու ոտ գնելու տեղ չը կայ. մի մատաչափ սխալ դրած ոտը գլորում է Ճանապարհորդին անդունդը, որտեղից էլ վերադառնալ չը կայ։ Լիրալը այսպիսի տեղերում բարերաբ դեր է խաղում. դրա մի ծայրը գետինը խրած և միւս ծայրից բռնելով մարդ կարողանում է անվտանգ անցնելու այդպիսի վտանգաւոր տեղերում։ Շատ տեղ մարդ ստիպուած է առանց հաւինջի, թէկուզ անձրևով գընալ, որպէս զի լերկալը կարողանայ գործ ածել։ Հարկաւորվում է գետակները անցնել՝ քարից քար թռչել տալով մի տեղ ես սխալուեցայ և գետը ընկայ, բարերաղդաբար հետս պատրաստի փոխելու հագուստ ունէի։ Յունիսի 26-ին մենք անցանք Չիթաղվալի լեռնաշղթան՝ նախ Մագանիդուտի լեռներից իջանք Մաջան գետի սկիզբը մօտ $^1/_2$ վերստ ձիւնի մէջ։ Մենք ամենքս էլ եաւինջին դնում էինք տակներս և վրան նստած երբէք սայլակի վերայ սլլվում էինք ներքև ձիւնոտ դաշտը։ Ցետոյ բարձրացանք լեռնային պլատօն, Սվանէթիայ դնացող Ճանապարհով մօտ 3 վերստ ձիւնի միջով։ Գրեթէ բարձրանալով 45% ուղեցող լեռան կողքով հասանք Չիթաղվալայի լեռնաշղթային. այնտեղից մի $^1/_2$ վերստ տափարակ հարթ ձիւնով գնալուց յետոյ, ձիւնի վերայ նստած կրկին գլորուեցինք անդունդը, Տարավարչխելօ (Սվաներէն Վարչխս Թօփի լեռնային սանդուղք) լեռնային լճի եզերքը և այդ տեղերով գնալով հասանք Չիթաղվալա լեռնաշղթային երկրորդ կէտին։ Լեռնաշղթան կազմում էր կիսաշրջան, որը մենք երկու տեղ կտրեցինք։ Այստեղ նորից ձիւնի վերայ նստած բաւականին ցածրանալով հասանք Խօպխս-Ղազալի գետի սկզբներին։ Մեր անցած լեռները կազմուածքով քեռածային էին գրանիտից (первичной формаціи)։ Բարձրալանդակներում բուսականութիւնը աղքատ է և տասնեակ վերստ անցնելիս մարդի հետք չի երևում։ Այստեղի բնակիչները՝ վայրենի գազանները և անասուններն են։ Նոյեմբերանդ անուանեալ տեղում մեզ ցոյց տուին 3—4 վերստ հեռաւորութեան վերայ մի հատ վայրենի այծեր, որոնք ձիւնի վերայ անվրդով խաղում էին։

Խօպխս Ղազալի գետի չրջակայ լեռներից մի քանիսը նման են մեր կողմերի լեռներին. գլանք մօտ 5—6 հազար դեսեատին տարածութեամբ խոտահաւքի տեղեր են. բայ խոտ հարող չը կայ։ Այստեղ առանց պահապանի ամբողջ ամառը արածում են Մենգրելիայից եկած մօտ 1000 ձիաներ։ Խօպխազքազում մեզ հետ միասին սվաններ, իշխան Թաթարխան Խադեշկիանուն հետ։

Մի քանի խօսք մենգրելների և սվանների մասին։ Մենգրելները ունէին երեսից Ճանապարհի պատրեղէնը պարկերում, որ կրում էին երեսից վերայ. վոքր Ճանապարհ գնացողը վերցնում է պատրեղէնը զամբիւղում։ Պատրեղէնի զամբիւղը կամ պարկը սրանք առնուանում են կօլխազայ, որը մեր վրաձառ Ճանապարհորդների լիքն խուրջինի տեղը կարող է բռնել։ Ամին մի մինգրելացի երեսն հարկաւոր առարկաները Ճանապարհում ունենում է հետը, և ուրիշից չատ հազիւ է ուզում մի բան։ Մի տեղ վեր գալուց յետոյ խումբը բաժանվում է մասերի, որոնց անդամները երեսից կօլխազան միատեղ չարում են, վարում են կրակը և ընկերական ղօմին եփում են ընկերովի վառած կրակի վերայ։ Ընկերներից ամեն մէկը երեսն բաժին ղօմին ձգում է կաթսան և ոչ ոք ոչ մէկին մի բանում պարտք չէ մնում։ Իշխանները առանձին են լմբվում։ Ուտելուց յետոյ մըշակները սկսում են խմբովին երգել զանազան եղանակներ, առանց խօսքերի։ Ուրիշ ազգերի երգերը կարելի էր նշմարել այդ երգերի մէջ՝ մասիւրի, կապոյտ երկնքում և այլ ուռս չատ ուրիշ հղանակները, միմիայն չատ փոփոխուած։ Սեփական երգերից յայտնի „վլալա“ էր լսվում։ Երբ սրանք հանգըստացած են, սկսում են երգել լեզգի եղանակը և ջահիլները պարում են, յանկարծ սկսում են կատարել այն խաղերը, որոնք ցերկրում մարզագէտներն են ներկայացնում։ Մէկ էլ տեսար հրացանը նշանին են ձգում կամ թոփ են խաղում։ Բաժանելով երկու խմբի թոփը չղրտում են այնպէս, որ իրենց խմբի անդամը բռնի, հակառակորդները հետևում են թոփին պանդան հնարներով իրենց ձեռքը ձգելու համար։ Նելկայացնում են պակը՝ մէկ ջահելի գլխին ծածկում են բաշլուղը, մէկը խաչեղրայը, միւսը քահանայ և մնացածները երգիչներ դարձած գնում են մի կողմ. նորահարսը հողը ձեռքն առած շաղ է տալիս. մէկը վերցնում է մի բուռ հող և ջրլտում է նրա բերանում։ Մէկ էլ տեսնես մի քանի երիտասարդները վազում են անմատչելի լեռնային տեղերով, ջանալով միմեանց առաջը կտրելու։ Սվանը աւելի է սիրում և աւելի մօտ է իւր իշխանին, քան մենգրելացին։ Առաջինը իւր իշխանին տեսնելիս նրա թևը կամ ուսը համբուրում է։ Իշխանը ծանօթ կամ անծանօթ կինոջ չանդկալելիս ինքն է նրան համբուրում։ Սվանը երեսն իշխանից ջոկ պաշար չուներ։ Մենգրելացին ոչ այնքան մօտ է և ոչ այնքան էլ սիրում է իւր իշխանին. դրանց կօլեադէքն էլ են ջոկ և առանձին։ Երևի այս է եղել պատճառը, որ փոքրիկ սվան ժողովուրդը մեզ հինուց Չչնամուն յաղթելիս է եղել։

Ես առաջ կարծում էի, որ սվանները մի վայրենի ժողովուրդ են. բայց չուտով փոխեցի կարծիքս։ Իշխան Թաթարխան Խադեշկիանին քաղաքակրթուած երիտասարդ է, Ճանապարհին ես հանդիպում էի հարիւրաւոր սվաններին, որոնք բեռնաւորուած 3—4 պուդ ղօմով երեք չորս և աւելի օր Ճանապարհ էին տանում իրենց ընտանիքը կերակրելու համար. սրանք պղտզավոխական կեղանակով են վարում. սրանք կարողացել են տէրութեանը հասկացնել, որ օղիի ազգիզը մի լեռնային աղքատիկ երկրում չատ վնասակար է, և տէրութիւնը դրանց խըմելը ի նկատի առնելով, սրանց մէջ ազգիզային սրճեքները չէ մտցրել։

Ս. Բահաթրեան.

Սեպտեմբեր։

Գիւղ Ժուշկայ (Մինգրելիայում)։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒԱՎԷՐ. 8 սեպտեմբերի.—Այս տարի մեր գիւղում ևս տրտնջում էին, որ հացը սակաւ կը լինի, սակայն անցան հունձերը և գիւղացիք լիագուլեն գոհունակութիւն են յայտնում Աստուծուն, որ իրենց խնայեց և բաւականին առատ ցորեան պարգևեց, որի պատճառով աժանութիւն է այստեղ։ Այգիներից ևս մեր գիւղացիք յոյսերը կըտրել էին, որովհետև երաշտութիւնը ցամաքացրեց մեր փոքրիկ գետակը, որով ոռոգում էին այգիները։ Սակայն վերջին առատ անձրևները գիւղացու յոյսերը վերանորոգեցին և այժմ ամենքն էլ սպասում են, որ այգիները կը հանեն իրենց անկեալ դրութիւնից, մանաւանդ որ մեղ հիւանդութիւնը բարակ է այս տարի։

Մեր գիւղում գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ. եթէ մի տարի երաշտութիւն է լինում, այնուհետև ոմանք մնաս բարեաւ են ասում իրենց արտերին և այգիներին։ Այստեղ անասնապահներ ևս կան, բայց արօտատեղիները քիչ լինելու պատճառով մեծամասնութիւնը չէ պարապում տաւարապահութեամբ։

Քանի ժամանակ է որ մեր գիւղացիք սաստիկ տխրած են, որովհետև մեր ամենին սիրելի գաւառապետ իշխան Աբխազը հեռացել է պաշտօնից։ Թէ չարգելի իշխանը ինչ գործեր է կատարել, դժուար կը լինի միառժամ Թուել, միայն յիշենք մի քանիսը։ Մեր գիւղը գողերով լիքն էր, օր չէր անցնէր որ գողութեան մի քանի դէպքեր չը պատահէին,—ոչ այգում լաւ պտուղ էին Թողնում և ոչ տանը գովուած կենդանին—մի խօսքով գիւղացիք վախենում էին մի որևէ ընտիր բան պահելուց։ Դաւառապետի հրամանով ժողովրդից ընտրուեցան երեսուն մարդ, որոնք պիտի պատասխան գողութիւնները վճռէին։ Սկսուեց այդ „երեսուն մարդի“ գործունէութիւնը։ Թէ չէ, գողութիւնները մի քանի օրում խստաւ վերջացան։ Շատ գեղեցիկ կարգադրութիւն է այդ որովհետև ժողովրդի ընտրած մարդիկն են վճռում գործերը, պատիժներ տալիս մեղաւորներին։ Դրանով գաւառապետը գիւղացոց տուել էր ազատութիւն, որ իրենք իրենց ապահովութեան մասին հոգան, այդպիսով էլ և գանգատաւորները բոլորովին հեռուէին լինում զանազան ծախքեր անելուց և կաշառքներ տալուց։ Թէև „երեսուն մարդի“ պատիժները մի քիչ խիստ էին, բայց խստութիւնը զգալի օգուտներ առաջացրեց։ Ոչ միայն Շուլավերը այդպիսով զրահատ դարձաւ, այլև իշխանի ձեռի տակ եղած գիւղերն այդ բաղտը վայելեցին։ Այդ գաւառապետի օրով էր, որ մեր գիւղն շուկան ընդարձակուեցաւ և խճուղի դարձաւ և հետզհետէ ընդարձակուելու են մեծ միջոցները։ Առաջ գաւառապետները մեր գիւղում չէին նստում, իշ. Աբխազը առաջինը եղաւ, որ մեր գիւղում նստեց, դրանով զարկ տուեց վաճառականութեան առաջանալուն։ Դրա շնորհիւ պետի մեր կալերը տեղափոխենք գիւղից դուրս, սա ևս խելացի մտադրութիւն է, որովհետև կալերը իրենց գոմանի չէջով ապականում էին օդը և ծանրացնում շնչառութիւնը։ Մեր գիւղի օդը շատ վճիտ և անարատ է, սակայն երեկոները երբ քամում էին կալերը, ամբողջ գիւղը մղկտուլ լցնվում էր։

Ա. Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ-ՌՈՒՄԻԼԻԱ.

„Fremdenblatt“ լրագրի մէջ կարդում ենք.— „Միւռէեան Ձգտումները, որոնք նկատելի էին Բոլգարիայի և Արեւելեան Ռումիլիայի բնակիչների մէջ, ներսոպայի քաղաքական շրջանների առանձին ուշադրութիւն գրաւած են շատ անգամ։ Զը նայելով սրան՝ ազգասիրութիւնը կատարուեցաւ և Բոլգարիայի իշխանի առաջնորդութեամբ հրատարակուեցաւ Բոլգարիայի միութիւնը անսպասելի կերպով, թէպէտ մեծ պետութիւնները միշտ ցանկացել են և ցանկանում են անքակ պահել արդէն գոյութիւն ունեցող միջազգային դաշնագրութիւնները, և այս ցանկութիւնը վերջին ժամանակ էլ արտայայտուեցաւ։ Իշխան Ալէքսանդրը Բատենբերգի վարմունքը, որ նա ինքնակամ իւր զօրքով ապստամբութեան գլուխ կանգնեց, ոչ միայն միջազգային իրաւունքի ժխտումն է, այլև Թիւրքիային պատերազմ յայտարարել է նշանակում եթէ իրաւ է, որ Բոլգարական զօրքեր են ուղարկուում դէպի Թրքական սահմանները։ Եւրոպան չի կարող Ճանաչել եւրոպական դաշնագրական իրաւունքի ժխտումն, որը միայն բանկանեան տէրութիւններից մէկին բացառական շահերին է ծառայում։ Անգլիան որպէս չուտ յաջորդում են մէկ մէկու և դեռ այնքան մուխ են մնում, որ անկարելի է մի որևէ որոշ բան ասել տէրութիւնների հաւաքական գործողութեան մասին։ Սակայն կարելի է վստահութեամբ սպասել, որ նայելով այն բարեկամական յարաբերութիւններին, որոնց մէջ գտնւում են ներկայումս եւրոպական տէրութիւնները և նրանց միաբան գործելու ցանկութեան, միջոցներ գործ կը դրուին շարժումն նեղ սահմանի մէջ պահելու և այս աշխատելու անցքերի վերայ աղդել Եւրոպայի ծայրագոյն իրաւունքին և բոլոր բալկանեան ազգերի շահերին համեմատ»։

—

ՌՈՒՄԻԼԻԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.—«Politische Corresp.» լրագիրը սեպ. 17-ի գլուխ տեղի ունեցած Փարբիէլ-փաշայի անկման հետևեալ մանրամասնութիւնները է հաղորդում.—«Ապստամբութեան ոգին թժիլկ Ստրանսկին էր, որ և ազգային կառավարութեան նախագահ հրատարակուեցաւ։ Արևելեան Ռումիլիայի վարչութիւնները և հանդանքները, որոնք տեղակայած էին հեռագրով կառավարութեան փոխոխութեան մասին, իսկոյն տեղեկացրին, որ իրենք էլ հետևեցին մայրաքաղաքի օրինակին։ Ամեն տեղ զանազան կուսակցութիւններ միացան, ամեն տեղ ուրախութեան ցոյցեր եղան։ Ցնորհնութիւն կայացաւ ի զէն կոչել այլ մարդիկներին 18 տարեկանից մինչև 40 տարեկանը։ Հաղորդակցութեան բոլոր միջոցները կ. Պօլսի հետ արևելեան-րումելական սահմանագլխի գործերի սպայներից ոչընչացան։ Փարբիէլ-փաշան անվտանգ պահվում է Ֆիլիպօպոլից 12 ժամ հեռու, Կոլբիսեցում։ Զօրագունդեր են ուղարկուած Թրքական սահմանի ամենանշանաւոր կէտերը բռնելու։ Հաշուում են, որ Բոլգարիան և Արևելեան Ռումիլիան կարող կը լինին 50,000 մարդ ուղարկել պատերազմի դաշտը, չը հաշուելով կամաւոր գինուորներին։ Բոլգարիայում գտնուղ օտար պետութիւնների ներկայացուցիչն. դեռյն դերը բռնեցին։ Անգլիական դիպլոմատական գործակից Տրոտտերը և անգլիական հիւպատոս Ֆաուստը, որոնք երկուսն էլ այժմ Ֆիլիպօպոլում են գտնվում, համակրութեամբ են խօսում պատահածի մասին։ Բոլգարիայի իշխանը Տիրնովից դուրս է գնացած և արդէն Կազանլիկ հասած է։ Ամին

տեղ ուրախութեամբ են ընդունել իշխանին։ Փիլիպպոլի քաղաքապետը դիմաւորել է բուլգարական իշխանին։

—

Միևնոյն անցքի մասին „Новости“ լրագրի Թղթակիցը հետեւեալներն է հաղորդում։—„Սեպտեմբ. 6-ի գիշերը Փիլիպպոլը կատարեալ ապստամբութեան մէջն էր։ Ընդհանուր նշանաբան էր՝ «Անկախ Ռումելիա, կեցցէ մեծացեալ Բուլգարիա»։ Ապստամբութեան լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ երկրի ամեն կողմերը, սպառազինուած գիւղացիք խումբերով Թափուեցան մայրաքաղաքը։ Ջօրքերի գլխաւոր հրամանատարը, գեներալ Կրեստովիչը կալանաւորուեցաւ իրեն պալատում և սպառազէն գիւղացիների հսկողութեան տակ տարուեցաւ։ Գօլեմօ Կոնարէ և բանտը գրուեցաւ։ Ժամանակաւոր կառավարութիւն սահմանուեցաւ, որի անդամների թիւում գտնվում են Ջաքարիա և Ստօեանով ապստամբապետները։ Բոլոր երկաթուղեայ և հեռագրական հաղորդակցութիւնները Ռումելիայի և Կ.-Պոլսի մէջ ընդհատուեցան, որպէս զի անկարելի լինէր Թրքական զօրքերի գուն գործելը Ռումելիա։ Ամեն միջոցներ է գործ դրուել, որպէս զի որքան կարելի է Թրքական զօրքերին Ռումելիայի սահմաններից հեռու պահել։ Թրքական սահմանագլուխ ուղարկուած է ընժիները Ռումելիայի և Բուլգարիայի կամաւորջնեերը ոչնչացնելու։

Ջաքարիա և Ստօեանով ապստամբապետները ամեն կողմից չնորհաւորական հեռագիրներ են ստանում։

Ընդհանուր յուզմունքը սաստկացաւ միւս օրը, սեպտեմբերի 7-ին։ Բուլգարական ժողովրդական դիւցազն Ռայիչօ Նիկիօլով, որ նոր էր Փիլիպպոլի զօրքերի գլխաւոր զօրապետ նշանակուել, պաստալին վարչութեան գլխաւորին Տօդօրովին կալանաւորման միջոցին առաջանակով վիրաւորուեցաւ։ Տօդօրովը, որ անկեալ կառավարութեան ջերմ կուսակիցներից մէկն էր, պատ քաղելով ժողովրդական ապըստամբութեան աղմուկից գողացաւ բոլոր պաստը։ Տօդօրովը պատառ պատառ եղաւ ժողովրդից, իսկ Ռայիչօ առողջանալու քիչ յոյս է խոստանում։ Վերջին առիթով ողջ երկիրը մեծ սուգի մէջն է։

Բուլգարական մի զօրագունդ Թուլ 200 մարդ մտաւ Ռումելիայի սահմանը։ Սօֆիայից կամաւոր զինուորների գունդեր գնում են Ռումելիա“։

—

„Koelnische Zeitung“ լրագրի Լօնդոնի Թղթակիցը մի երկար յօդուած է նուիրում վերաբերեալ ռուս-աւղանական սահմանագլխի վէճի քաղաքական վերջաւորութեան, խօսելով յայտնի պայմանների մասին, վերջաբանութեան մէջ Թղթակիցը ասում է հետեւեալը. «Արդէն Լօնդոնի քաղաքական շրջաններում սարդ խօսում են, որ ապագայում պիտի Ափղանիստանը բաժանուի, այնպէս որ Կաբուլը և Ղանդահարը պատկանի Անգլիային, իսկ Հերաթը Ռուսիային։ Աւղանիստանի էմիրի վերայ նայում են ինչպէս մի վնասակար և անօգուտ Անգլիայի համար գաղնակցի վերայ։ Ներկայում նրան գրամական նպաստ են տալիս այն պայմանով, որ նա դիմադրէ Ռուսիային։ Էմիրն էլ այդ պատճառով իր օգուտը և նպաստը պաշտպանելու համար, սահմանագլխում թեթև հրկպառակութիւններ է ձգում։ Առանց այդ օգնական նպաստի, որով էմիրը վճարում է իր զինուորների ռոճիկը, նա գոյութիւն չունի և տարել չ կարող։ Կը գայ ժամանակ, որ անգլիացիների վերայ այդ գաղնակցութիւնը շատ թանգ կը նստի ու վտանգաւոր կը լինի և այն միջոցին էմիրի յարաբերութիւնը դէպի Անգլիան կը լինի այնպէս, ինչպէս Շեր-Ալունը։ Աղդէն բաղտից վճռուած է, որ Աւղանիստանը պիտի ոչնչանայ։ Եւ Ռուսիայու Անգլիայ բարեկամական յարաբերութիւնները այն ժամանակ կունենան հաստատ հիմնաւորութիւն, երբ կ'ներգործուի Աւղանիստանի ոչնչանալը։ Ռուսիան և Անգլիան այդ հարցին վերջաւորութիւն տալու համար պիտի մերձենան միմեանց շատ խոհեմ և խաղաղ ձանապարհով։ Ռուսիան, չնորհիւ իւր Միջին Ասիայում ունեցած տիրապետող ոյժի և յարաբերութիւնների, պիտի այնքան յառաջ գնայ, մինչև որ հանգիպի մի քաղաքակրթեալ տէրութեան։ Այն ժամանակ և միայն այն ժամանակ իսկապէս վերջաւորութիւն կստանայ Ռուս-Աւղանստանի սահմանագլխի վէճը։

—

— „Berliner Politischen Nachrichten» լրագրին հաղորդում են, որ սպանիական կառավարութեան վերջին ծանուցագիրը երկու մասի է բաժանվում. նրանցից առաջինը պարունակում է իւր մէջ Մադրիդի կաբինետի ներողութիւնը այն անպատուութեան համար, որին ենթարկուել էր գերմանական դեսպանութիւնը և խօսում է այն բաւականութեան մասին, որ սլետի տրուի Գերմանիային. իսկ երկրորդ մասում ապացոյցներ են բերվում Սպանիայի անբարեացակամութեան իրաւունքը հաստատող Կաբօլինեան կղզիների վերայ։ Առաջ գրաֆ Բիսմարքը ներկայացրից արտաքին գործոց գերմանական մինիստրութեան ծանուցագրի առաջին մասը, իսկ երկրորդը իրեն մօտ լինոլեց աւելի ճիշտ վերածելու բնագիրը սպանիերէնից գերմաներէնին։ Իսկ այժմ Բերլինից հեռագրում են «Koelnische Zeit.» լրագրին, որ սեպտեմբերի 3-ին յանձնեց Մադրիդի կաբինետի պատասխանի և երկրորդ մասը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բէյրութ քաղաքից գրում են Կ. Պօլսի լրագիրներին, որ օրերումն բացուել է մի կազմակերպուած աւազակների ընկերութիւն, որ ունեցել է իւր տեսուչը, քարտուղարը, գանձապահը և իւր խանութները. այդ հրոսակի պաշտօնակից համարւում են շատ աստիճանաւորներ, որոնք պատկառելի տեղ ունէին հասարակութեան մէջ։ Ընկերութեան գլխաւոր անդամները բռնուած, հսկողութեան ներքոյ են գտնւում, որոնք ծանուցին, թէ այդ հրոսակը ութ տարի է, որ գոյութիւն ունէր, և թէ ամեն գլխաւոր քաղաքներում ունէր իւր գործակիցները, որոնք պարապում էին մէամիտ և անզգոյշ մարդկիներին կողոպտելով.

***

Աւստրիայի իշխանը ջանաց վերահաստատել այն կարգը, որով որսորդները օրոշեալ հարկով ստանում էին իրաւունք Վիէննայի օտիկանատնից դէնք գնելու որպէս զինուորական։ Ի հարկէ, իշխանը մանրամասն վկայագրի կարիք չունէր, սակայն, որպէս զնալիս նա հազար զինուորական չորերը և յայտնուեց օտիկանատան վկայագիր ստանալու։ Վիէննայի լրագիրները յիշում են, որ որսորդական հարկի ներմուծութեան պատճառը Ֆրանց-Յովսէփ կայսրն եղաւ, որ առաջին անգամ վճարեց որսորդական հարկը և պահանջեց որսորդական քարտէզ։

***

«London News» լրագիրը պատմում է հետադայ անեկդոտը Հնդկաստանի փոխարքայի վերայ։ Էլ-լահորի հնդիկ իշխանը տակաւին իւր երիտասարդ հասակում քաղաքակրթութեան փափագող մարդ էր. մի անգամ գտնուելով փոխարքայի հիւրերի մէջ, նա հետաքրքրութեամբ նայում էր „London Illustradet News“ լրագրում տպուած պատկերներին։ Որովհետև չգիտէր անգլերէն, այդ պատճառով փոխարքան Թարգմանչի միջնորդութեամբ մեկնում էր պատկերների էութիւնը, և նա գոհ էր Լորդ-Դիւֆֆէրինի բացատրութեամբ։ Փոխարքան այնուհետև ամեն շաբաթ ուղարկում էր իշխանին նոյն լրագրի համարները. իշխանը եռանդուն կերպով աշխատում էր՝ իւր աշխատութեան և ընդունակութեան չնորհիւ, նա կարճ ժամանակում իւրացրեց այդ լեզուն, այնպէս, որ երկրորդ անգամուայ այցին, զարմացրեց ամէնքին նրանով, որ կարողանում էր կարգալ պատկերների տակ գրուածները և առանց մէկի օգնութեամբ հասկանալ։ Հէնց այս է, որ բերեցին նոր լրագիրները և սկսեց կարել նրանց Թերթերը վրդովկրից չնուած գանակով։ „Այս ինչ է“, հարցրեց հնդիկ իշխանը, ցոյց տալով գանակը։ Այս մի գանակ է, որով կտրում են լրագրների և գրքերի Թերթերը, ասաց Լորդը։ „Թոյլ տուէք ինձ ուղարկել ձեզ սրանից լաւ գանակ, իսկ այդ բարեհաճեցէք չնորհել ինձ“։ Փոխարքան յօժարութեամբ կատարեց երիտասարդ իշխանի ցանկութիւնը։

Անցաւ բաւականին ժամանակ և իշխանը մուռացաւ իրեն խոստացած գանակի մասին, բայց ահա մօտ ժամանակներում նրան ծանուցին էլ-լահորայի հնդիկ իշխանի գալուստը։ Փոխարքան, տեղական սովորութեան համաձայն, դուրս եկաւ նրա առաջ ուր նոր էր մօտենում իշխանը սպիտակ փղի վերայ նստած, որը ծածկուած էր ասեղնագործ ոսկեղէն թամբի վերայ։ Իշխանը ցած ընկաւ փղի քամակից, մօտեցաւ փոխարքային և ողջունելով նրան, ասաց. „Երախտապարտ բարեկամ, ձեր փղոսկրեայ գանակի տեղ բերում եմ ձեզ ընծայ“։ Մեծ եղաւ փոխարքայի զարմանքը, երբ ցած բերեցին փղի գլխի ծածկոցը, որի երկու ժանիք ատամները գեղեցկանկար քանդակուած, ողորկած և սրածայր վերջանում էին, ինչպէս այն գանակը, իշխանը կանչեց Ծառային, որ գրեց փղի առջև տակաւին չկտրած լրագիրների մի ծրար։ Սեյիդ կենդանին վերցրեց ծրարը կնճիթով, մօտեցրեց այն ժանիքներին, և կարելով Թերթերը դարձնում էր տիրոջը. իսկ սա, փոխարքայի հիացումից ներքին բաւականութեամբ, ասում էր. „Ի՞նչ, ինչպէս է զուր գալիս ձեզ այս գանակը“։ Փոխարքան անկեղծ չնորհակալութիւն յայտնեց այդպիսի ընծայի համար, բայց կասկածելի է, Թէ այդպիսի գանակը տեղաւորուել կարողանայ նրա գրասեղանի վերայ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

13 սեպտեմբերի.

Աթէնք. Ազգային ժողով է գումարվում և պահեստի զօրքերը պատերազմի են պատրաստվում։ Կրետէ կղզին պատրաստվում է իւր անկախութիւնն հրատարակել։

Կ.-ՊՕԼԻՍ. Բերլինի այժմեան Թրքական դեսպան Սայիդ փաշան արտաքին գործոց մինիստր է նշանակուած։ Նշանակութեան և ուրիշ մինիստրներ։

Թիւրքերը գրաւեցին սահմանագլխի բումելական ճանապարհը, բայց առաջ չեն գնում։

ՖԻԼԻՊՊՕՊՕԼ. Այստեղի օսար տէրութիւնների ներկայացուցիչները հեռագրեցին իրենց կառավարութիւններին, որ միութեան շարժումն իսկ բուլգարական գործ էր և գլուխ բերած մինչև անգամ Ռուսիայի համար անպատելի կերպով։

ԲԵՐԼԻՆ. Դրամարժէքները (կուրս) բարձրացան այն լուրի պատճառով, որ երբեք Թուրքիան համաձայնուել է դեսպանաժողովով գումարել Բուլգարեան հարցի լուծման համար։

ՄԱԴՐԻԴ. Սալանիան ընդունեց Գերմանիայի առաջարկութիւնը պապի միջնորդութեամբ Կարօլինեան հարցը վճռելու։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

13 Սեպտեմբերի.

Երէ՛ ամսաչան զրամաթղթերը։

Լօնդոն $23^{19}/_{32}$, $23^{3}/_{4}$ և $23^{5}/_{8}$
Համբուրգ $200^{3}/_{4}$, $201^{1}/_{2}$ և 201
Պարիզ $249^{1}/_{4}$ և 249
Պօլուիմպերիալ 8 ր. 39 կ. սակ.
Մաքս. կուպոն. 8 ր. 37 կ. սակ.
Լրծաթի . . . 1 » 33 կ. »
Բօրսային դիս. $5^{1}/_{8}$ և $6^{1}/_{4}$ %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 98 ր. 87 կ. գն.
2-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
3-րդ » . $98^{1}/_{2}$ ր. — կ. սակ.
4-րդ » . $98^{1}/_{4}$ ր. — կ. գն.
5-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի $96^{1}/_{4}$ ր. — կ. սակ.
2-րդ » . $96^{1}/_{4}$ ր. — » սակ.
3-րդ » . $96^{1}/_{4}$ ր. — կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . 219 ր. » սակ.
» » 2-րդ $207^{1}/_{4}$ ր. » սակ.
$5^{1}/_{2}$% բենտեր 102 ր. 12 կ. սակ.
Ոսկէ բենտը . $174^{1}/_{2}$ ր. » սակ.
Նոր կոնսոլ փոխ. $147^{3}/_{4}$ ր. կ. սակ.

14 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յուլիսի մաքսահարկը 2,369,615 րուբլիով պակաս էր 1884 թ. յուլիսի մաքսահարկից։ Նոյն ամսի ապրանքի արտամուծութիւնը եւրոպական սահմանից պակսեց 13,473,000 ր. իսկ ներմուծութիւնը — 22,159,000 րուբլիով, համեմատած 1884 թ. համապատասխան ժամանակաշրջանի հետ։

«Journal de St.-Pètersbourg» պատասխանելով այն մի քանի արտասահմանեան լրագիրներին, որոնք տարածում են անճիշդ և փոթորկալի տեղեկութիւններ, հաղորդում է, որ տէրութիւնների մէջ, որոնք փոխադարձ վստահութեամբ և անկեղծութեամբ են տոգորուած, բանակցութիւններ են լինում իրենց գործողութիւնների միութեան մասին խաղաղացնելու նպատակով։

Կ.-ՊՕԼԻՍ. Սուլթանի հրովարտակը, որ յայտարարում է մինիսարների փոփոխութեան մասին, մեծ վեզիր Սայիդ-փաշայի հրաժարականի պատճառը նրա խանգարուած առողջութեան է վերագրում և յոյս է յայտնում, որ նոր մինիստրութիւնը կը նպաստէ Թիւրքիայի բարեկեցութեան և նրա փառքի մեծութեան։

ԱԹԷՆՔ. Թագաւորը վերադարձաւ։ Զօրքերի պատերազմական պատրաստութիւնները ջերմագին շարունակվում են. զօրքերը կեդրոնանում են Թէսսալիայի և Էպիրոսի սահմաններում։ Ռումելիայից ստացած տեղեկութիւնների պատճառով յուզմունքը սաստկանում է։ Բոլոր լրագիրները առանց կուսակցական խորութեան և բազմաթիւ ազգային ժողովները պահանջում են եռանդագին պաշտպանել յունական ազգութեան շահերը։

ԿԱՏԱՐՕ. Միջոցներին են ձեռնամուխ լինում, հարկաւոր դէպքում, Չերնօգորիայի զօրքերը պատերազմի պատրաստել։

ԲԵԼԳՐԱԴ. Նշանակուեցան գօրավարները հինգ գործող զօրաբաժինների համար։

ՍԻՄԼԱ. Հնդկական զօրքերի առաջին զօրաբաժինը պատերազմի պատրաստ պահելու կարգադրութիւնը այժմ վերացաւ։

ՎԻԷՆՆԱ. Լսվում է, որ ռուսաց արտաքին գործոց մինիստր վաղը Միրանից կերթայ Պետերբուրգ։

ՎԻԷՆՆԱ. Այստեղ տեղեկութիւն ստացուեցաւ, որ ալբանցիք գլխավին ապստամբուել են Թիւրքերի դէմ։

ԱԹԷՆՔ. Հրամայուած է սպառազինել բոլոր նաւատորմիղը։

Կ.-ՊՕԼԻՍ. Օրերումս այստեղ դեսպանաժողով կը գումարուի Արևելեան-Ռումելիայի հարցը քննելու։

ՄԱԴՐԻԴ. Գերմանիան բաւականացաւ Սպանիայի մեկնութիւններով գերմանական դեսպանատան անպատուութեան մասին սպանիական ամբոխից։ Մադրիդի կաբինետը ցաւակցութիւն յայտնեց ամբոխի չափազանցութիւն. առթիւ. կառավարութիւնը խիստ պատժի ենթարկեց այն ոստիկաններին, որոնք չ'ընդդիմացան ամբոխի բռնութեան։

Պատական քննութիւնն սկսուեցաւ անկարգութիւններին մասնակցողների դէմ.

ՎԻԷՆՆԱ. Գահակալ ճառը, որ կարդացուեցաւ պարլամենտի բացման միջոցին, հաղորդում է, որ Աւստրօ-Ունգարիայի յարաբերութիւնները դէպի բոլոր պետութիւնները կատարելապէս գոհացուցիչ են, և բոլոր պետութիւնները ձգտում են խաղաղութիւն պահպանելու։

ԴԱՆԶԻԳ. Ծովակալութեան լորդ Համիլտոնը մի ճառ խոսաց, որի մէջ Արևելեան Ռումելիայի վերաբերմամբ յայտնեց, որ հիմք կայ ենթադրելու, որ պետութիւնների միաձայն ջանքերով կը յաջողուի եթէ ոչ բոլորովին ճնշել, գէթ սահմանափակել շարժումն։

ՓԱՐԻԶ. Այստեղ կարծում են, որ նոր Թրքական մինիստրութիւնը հակամէտ է դէպի հաշտութիւն և իւր գործողութիւնները համաձայնեցնում է պետութիւնների գործողութիւնների հետ։

ՍՕՖԻԱ. Արտասահմանի բուլգարական քաղաքական գործակիցներին ուղղուած շրջաբերականում ասուած է, որ իշխանը ի նկատի առնելով կատարուած իրողութիւնները, իւր սրբազան պարտք համարեց բաւականացնել

ՁԻՒՈՂՈՒԹԻՒՆ. Ինձ մեծ պետութեան հպատակեալ Հայոց ազգիս զաւակ ըլլալուս համար՝ ուրախ եմ որ ինձ ալ կ՚արժանանամ ձեր պատուական լրագրոյն մէջ իմ կարծիքս յայտնել ի նկատմամբ Հայոց ազգին ներկայ դրութեան։ Ես ինչպէս ամէն մարդ գիտէ՝ ծնած եմ Պարսկաստանի մէջ, ուր ամէն ազգերէն աւելի Հայեր կան։ Ես ալ Հայ եմ, ինչպէս ամէն մարդ գիտէ, ուրեմն ինչ որ կ՚ըսեմ Հայոց ազգին վրայ՝ ինքզինքս կ՚ըսեմ